Հավելված N 10
ՀՀ կառավարության 2025 թվականի
դեկտեմբերի 25-ի N 1979 - Ն որոշման

Ծառայություններ կամ մեթոդներ, որոնք ունեն սահմանափակ հասանելիություն

1. Անհատական մոդելավորմամբ տարբեր օրգանական և անօրգանական նյութերի կիրառում գանգաթաղի ռեկոնստրուկտիվ վիրահատությունների (կրանիոպլաստիկայի) ժամանակ:
2. Էպիլեպսիայի վիրահատական բուժում:
3. Վագոստիմուլյատորի տեղադրում դեղորայքակայուն էպիլեպսիայի բուժման նպատակով:
4. Բակլոֆենային պոմպի տեղադրում մկանային սպաստիկայի բուժման նպատակով:
5. Գլխուղեղի և ողնուղեղի ստիմուլացիայի նպատակով կատարվող վիրահատություններ:
6. Բալոնային պլաստիկա կամ վալվուլոտոմիա սրտի բնածին արատների դեպքում:
7. Տրանսկաթետերային եղանակով սրտի վիրահատական միջամտություններ:
8. Սրտի փորոքի օգնական սարքի տեղադրում:
9. Ախտորոշիչ և բուժիչ սարքերի և/կամ նրանց էլեկտրոդների էքսպլանտացիա կամ իմպլանտացիա:
10. Անոթների էմբոլիզացիաներ:
11. Էնդովենոզ լազերային օբլիտերացիա:
12. Ոսկրապլաստիկ ռեկոնստրուկտիվ վիրահատություններ՝ բացառությամբ ֆունկցիոնալ-վերակառուցողական վիրահատությունների:
13. Սկոլիոզի և ողնաշարի այլ ձևախեղումների վիրահատություններ:
14. Աչքի պրոթեզավորման համար անհրաժեշտ ակնակապճի պլաստիկա և պրոթեզներ:
15. Չընդհատվող աֆերեզի ֆիլտրացիոն(մեմբրանային) և գրավիտացիոն եղանակով տրամադրվող բժշկական օգնություն:
16. ՀԼԱ-Ա-Բ-ԴՌ (HLA-A-B-DR) գենոտիպավորում պոլիմերազային շղթայական ռեակցիայի եղանակով:
17. Արյունաբանական հիվանդությունների բուժում մոնոկլոնալ հակամարմիններով, բարձր բիոլոգիական ակտիվությամբ օժտված դեղերով, թանկարժեք բջջաթունային դեղերով ինտենսիվ թերապիա:
18. Մոնոկլոնալ հակամարմիններով արյան բջիջների սպեցիֆիկ տարբերակման հետազոտում:
19. CAR-T բջջային թերապիա:
20. Կոխլեար իմպլանտի տեղադրման վիրահատություն (այդ թվում իմպլանտի արժեքը):
21. Կոկորդի չարորակ նորագոյացության դեպքում ձայնալարի պրոթեզի կիրառում:
22. Ափիոնային թմրամոլությամբ պացիենտների գերարագ ապաթունավորում և զրկանքի համախտանիշի դադարեցում ափիոնային անտոգոնիստներով՝ ընդհանուր անզգայացման տակ:
23. Ատամների արհեստական արմատի (իմպլանտի) տեղադրում:
24. Ատամների անշարժ պրոթեզավորում՝ կերամիկական, մետաղակերամիկական, ցիրկոնե նյութերով:
25. Ատամների մասնակի բյուգելային պրոթեզավորում:
26. Կերակրափողի, ստամոքսաելքի և հաստ աղու ստենտավորում:

27. Կերակրափողի փոխարինող վիրահատություններ (պլաստիկա հաստ աղիքով կամ ստամոքսով):
28. Կոկորդի բնածին/հետինտուբացիոն և շնչափողի հետինտուբացիոն/ հետտրախեոստոմիկ նեղացումների վիրահատություններ՝ կողաճառի կամ T-աձև խողովակի օգտագործմամբ, ցիրկուլյար մասնահատումներ:
29. Արհեստական օրգանների (բացառությամբ ոսպնյակների) և հյուսվածքների իմպլանտացիա:
30. Լյարդի ուռուցքների, լեղածորանների (ներլյարդային, արտալյարդային) ներլուսանցքային աբլացիա:
31. Լազերային կամ ռադիոալիքային տեխնոլոգիաների կիրառմամբ կատարվող էսթետիկ վիրահատություններ:
32. Կոսմետոլոգիական միջամտություններ:
33. Պլաստիկ վիրահատություններ (բացառությամբ պլաստիկ-վերակառուցողական վիրահատությունների):
34. Բրախիոթերապիա:
35. Կրծքային ավշային ծորանի կլիպավորում:
36. Գործող արհեստական կերակրափողի ռեկոնստրուկտիվ վիրահատություններ:
37. Շնչափողի և բրոնխների ստենտավորում:
38. Լեղածորանների ստենտավորում և բալոնային դիլատացիա:
39. Ներլյարդային լեղուղիներից և ընդհանուր լեղածորանից քարերի անտեգրադ լիտոէքստրակցիա:
40. Ուռուցքային օջախի միջզարկերակային քիմիոէմբոլիզացիա:
41. Ռադիովիրաբուժություն նորագոյացությունների դեպքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ